ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 12. 1954 Общественные науки

Հ. Ղալբացդյան

ԱՐԱԲՆԵՐԻ ՀԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
(640—862)

Արաբների հարկային քաղաքականությունը ենթարկվել է մի շարք փոփոխությունների, ըստ հարկերի տեսակի, քանակի կամ գանձման եղանակի։ Կարելի է նշել հինգ գլխավոր ժամանակաշրջան։

1. Արաբական արշավանքներից մինչև Մուավիյայի դաշնագիրը (640—652), որը պատահական հարկատվության շրջանն է։

2. Մուավիյայից մինչև Արդ-ուլ-Մելիքի խալիֆայությունը. (652—686), որը համեմատաբար թեթև հարկատվության շրջանն է։

3. Արդ-ուլ-Մելիքից մինչև Հեշամի խալիֆայությունը (686—724), որը հարկերի հետևողական ծանրացման շրջանն է։

4. Հեշամից մինչև Օմայան դինաստիայի վախճանը (724—750), որը միօրինակ չէ, այլ փոխվել է քաղաքական դեպքերին համապատասխան։ Առաջին շրջանի համար բնորոշ է ծանր հարկապահանջությունը իսկ վերջին տասնամյակի համար՝ ժամանակավոր թուլացումը։

5. Աբասյանների շրջանը (750—862) ընդհանուր առմամբ բնութագրվում է ծանր կեղեքումներով, բացառյալ 820—847 թթ., որը հանդիսանում է իշխանության թուլացման, հարկերի թեթևացման քաղաքականության կիրառման շրջան։

1. Արաբական արշավանքներից մինչև Մուավիյայի դաշնագիրը

Այս առաջին շրջանում հայերից գանձվող հարկը ընդհանուր առմամբ համարվում է արաբների կողմից տրված կյանքի և գույքի երաշխավորության փոխարեն հատուցվող գումար։ Այդպիսի տուրք վերցնում էին արաբներն իրենց գրաված բոլոր գավառներից, երբ հաշտություն էր կնքվում տվյալ գավառի կառավարչի հետ, և բոլոր քաղաքներից, երբ հաշտություն էր կնքվում տվյալ բնակիչների հետ, անջատ՝ մյուս գավառներից կամ քաղաքներից։ Դաշնագրի բանաձևը գրեթե ամենուրեք նույնն էր. վճարված հարկի փոխարեն ապահովվում էր բնակիչների կյանքը, գույքը, կրոնը, առևտուրը, քաղաքի պարիսպները։ Երաշխավորումը այստեղ երբորդ անձի կամ թշնամու դեմ չէր, այլ մուսուլմանական օրենքով կարելի էր որոշ տուրքի փոխարեն հպատակվող «գրքի մարդկանց» կյանք շնորհել։ Տիրապետողը երդմամբ հանձն էր առնում ոչ մի վնաս չպատճառել նրանց անձին, ստացվածքին ու հավատքին, որքան ժամանակ որ տուրքը վճարվում էր։ Ըստ էության այդ հարկը կարելի է համարել փրկագին։

Այս հարկը արաբները կոչում են «ջիզիա» կամ «խարաջ»։ Արաբերեն այս երկու բառերը, սկզբնական շրջանում, ընդհանուր առմամբ, նշանակել են տուրք կամ գլխահարկ։ Ջիզիան ավելի գործածական էր Ասորիքում,

իսկ խարաջը՝ Իրաքում և Պարսկաստանում։ Հետագայում, երբ գլխահարկի եկամուտների նկատմամբ և խալիֆայական պետական բյուջեի կանոնավորման համար սահմանվեց հողային տուրքը, ջիզիան մնաց հատկապես գլխահարկի համար, իսկ հողային տուրքը կոչվեց «խարաջ»։

Բացի փոխադարձ համաձայնությամբ ճշտված և վճարված փրկահարկից, արշավող բանակները վերցնում էին նաև պատերազմական ավար «ղանիմա», որը մուսուլմանների մոտ եղել է պարտվողներից վերցվող գըլխավոր հասույթը. դրա համար էլ հարկային առաջին կանոնը Կուրանում (VIII, 42) վերաբերում է այդ եկամտի հատկացմանը։

Մեր պատմիչներն այս հարկի մասին չեն խոսում, արաբացի պատմիչներն են, որ հիշատակում են հպատակության այն դաշնագրերը, որոնք կնքվել են գրավված քաղաքների հետ։ Ինչ վերաբերում է տուրքի քանակին, այդ մասին, հատկապես Հայաստանի համար, արաբացի պատմիչների մոտ որոշ տեղեկություն չկա, բայց արևմտյան սովորաբար գլխահարկը 1—4 ոսկի դինար էր լինում, և ինչպես Բելազուրին և Տաբարին են վկայում, Թիֆլիսի ու Կովկասի մի շարք այլ քաղաքների բնակիչները վճարել են մեկ դինար տուրք, ուստի սխալ չէր լինի դրանից հետևցնել, որ Հայաստանի քաղաքների բնակիչներից էլ մեկական դինար է վերցվել։

Հայաստան արշավող առաջին զորականները՝ Իյադ-Իբն-Ղանեմը և Հաբիբ-Իբն-Մասլաման նման մի շարք դաշնագրեր են կնքել Հայաստանի գավառների և քաղաքների հետ։

Առաջին շրջանում, երբ տիրապետությունը վերջնական ու լրիվ չէր, կազմակերպված վարչական գոյություն չուներ, պատերազմական գործողությունները հրոսակային արշավանքներ էին, տուրքը կարող էր լինել միայն միանվագ և ժամանակավոր, ուստի հասկանալի է, որ այն չէր կարող ունենալ ոչ տնտեսական և ոչ էլ քաղաքական մեծ կշիռ։ Ընչաքաղց հրոսակախմբերին, անշուշտ, գերիներն ու ավարը ավելի շահավետ էին ու ավելի անմիջական արդյունքներ կտային։

Բացի դրամական տուրքից, քրիստոնյա հպատակները ստանձնում էին դաշնագրով մի շարք պարտավորություններ, ինչպես՝ օգնել խորհրդով մուսուլմաններին, նրանց պատսպարել մի գիշեր, տալ նրանց կրոնով չարգելված կերակուր (այսինքն՝ ոչ խոզի միս, ոչ գինի) ընկերանալ նրանց մինչև մերձակա կայանը։

2. Մուավիայի դաշնագրից մինչև Աբդ-ուլ-Մելիքի խալիֆայությունը

Այս շրջանը սկսվում է Թեոդորոս Ռշտունու և Ասորիքի կառավարիչ Մուավիայի միջև 652 թվականին կնքված դաշնագրով։ Սրանով, քաղաքական հպատակության հայտարարության հետ սկիզբ է դրվում կանոնավոր հարկատվության։ Դաշնագրի հարկային պայմանը համեմատաբար թույլ է. «ոչ առնում ի ձէնջ սակ զերեամ մի, ապա յայնժամ տաջիք երդմամբ որչափ և զոր կամիցիք» (Սեբեոս, էջ 224)։

Ուրեմն հարկի սակը թողնված էր հայ իշխանների հայեցողությանը։ Այն գումարը, որը որոշվել է հայ իշխանների համաձայնությամբ, եղել է 500 ոսկի դինար, ինչպես վկայում է Ղևոնդը. խոսելով մի քանի տարի

անց Գրիգոր Մամիկոնյանի և Սմբատ Բագրատունու Դամասկոս պատանդ տարվելու մասին, նա գրում է. «Եւ տարեալ զնոսա առ իշխանն տաճկաց Մուաւիա, հատին ի վերայ աշխարհիս հայոց հարկս 500 դահեկան ի միում ամի հատուցանել նոցա և անեղկիւզ մնալ ի բնակութիւնս իւրեանց» (Ղևոնդ, էջ 33)։

Երբ Մուավիան դարձավ խալիֆա և հայ իշխանների ու Ներսես III Շինող կաթողիկոսի դիմումի և հպատակության ակտով Գրիգոր Մամիկոնյանը Հայաստանի իշխան կարգվեց, խալիֆան վերահաստատեց նույն հարկը։ «Եւ կացոյց Մաւի իշխան հայոց զԳրիգոր Մամիկոնեան և եդ հարկս հայոց Շ (500) դահեկանս» (Վարդան, էջ 68)։

Հարկի այս քանակը Մուավիայի հաջորդ Եզիդ I խալիֆայի ժամանակ էլ մնաց նույնը։ «Եւ նա վարեաց զաշխարհս Հայոց ի նոյն սակ հարկիս» (Ղևոնդ, էջ 34)։

Այս ժամանակաշրջանում, ուրեմն, հարկը եղել է մեծ մասամբ դրամական և վճարվել է միանվագ Հայաստանի իշխանի կողմից, առանց միջնորդի։

Եղել են այս տուրքից դուրս ուրիշ տուրքեր կամ պարտավորություններ։

Սամ. Անեցին հիշատակում է ինչ որ Մահմեդի տրված մի շարք տուրքեր. «Եւ անմոռաց երդմամբ կնքեաց մուրհակ Հայոց աշխարհիս համարձակ ունել զքրիստոնէութիւն, և վաճառեաց նոցա զհաւատս նոցա, յամենայն տանէ առեալ Ը դրամ, և Դ մոթ խորթալ և ձիատօպրակ մի և պարան մի մաղէ և ձեռնարար մի» (Սամ. Անեցի, էջ 82)։

Այստեղ ճշտված չէ ոչ թվականը և ոչ Մահմեդի ով լինելը։ Տեքստից երևում է, որ ակնարկը վերաբերում է նույն ինքն մարգարեին։ Մինչդեռ հարկի տեսակը բոլորովին տարբեր է մյուս աղբյուրների հիշատակածից, տրված է բոլորովին տարբեր ձևով, այսինքն՝ առավելագույն գլխահարկի և բնատուրքի վրա։ Ճիշտ կլիներ հետևցնել, որ Սամ. Անեցու հիշատակած խիստ հետաքրքիր տեղեկությունը վերաբերում է հաջորդ շրջանին, այսինքն՝ Աբդ-ուլ-Մելիքին, երբ հարկերը ծանրացան։

3. Աբդ-ուլ-Մելիք խալիֆայից մինչև Հեշամը

Արաբական խալիֆայության քաղաքական վարչական կյանքում և հարկային քաղաքականության մեջ մի նոր շրջան է սկսվում Աբդ-ուլ-Մելիքի գահ բարձրանալուց հետո։ Նրա իշխանության սկզբի տարիներին տեղի ունեցավ Աբդալլահ Իբն Ազ-Զուբայրի ապստամբությունը, որը մեծ դժվարություններ ստեղծեց խալիֆայի ներսում։ Դրանից օգտվելով, 681—682 թթ. հայերը, ինչպես և մյուս հպատակ ժողովուրդները փորձեցին ապրստամբել Իսլամորին։ Գրում է. «Իբն Ազ-Զուբայրի խռովության ժամանակ հայոց ազատանիները և նոցա ծառաներ վտարանջևցան և բնակիչք ապրստամբեցան» (Բելազ, էջ 54)[1]։ Ղևոնդը գրում է. «Ի ժամանակի պատերազմին, որ ի մեջ տաճկաց, դադարեցին ի հարկատուութենէ նոցա հայք, վիրք, ազուանք» (էջ 35)։

Հարկատվության դադարումը փաստորեն նշան էր ապստամբության,

[1] Օգտագործում եմ Խալաթյանցի թարգմանությունը։

որը տևում է երեք տարի և որից հետո խազարներն էլ, անպաշտպան գըտնելով Կովկասյան սահմանագլուխը, արշավում են Հայաստանի վրա և Գրիգոր Մամիկոնյանն սպանվում է նրանց դեմ կռվելիս[1]։

Երբ Աբդ-ուլ-Մելիքը զսպում է ներքին խռովությունները և վերահաստատում իշխանությունը, ձեռնարկում է պետական ապարատի հիմնական վերակառուցմանը։ Պետականության ամրացման հիմքերից գլխավորը լինելով ֆինանսական սիստեմի կարգավորումը, Աբդ-ուլ-Մելիքը այդ ուղղությամբ կատարում է կարևոր կարգադրություններ։ Արաբերեն լեզվի պետական լեզու դարձնելը, քրիստոնյաների հանդեպ խստությունների սաստկացումը, արաբերեն վերատառությամբ նոր դրամանիշների ստեղծումը, որով խըզվում էր բյուզանդական դրամանիշներից կախումը և մի շարք այլ միջոցառումներ՝ բնութագրական են նրա գործունեության համար։ 7-րդ դարի վերջերին խալիֆայական հողերի սահմանները ընդարձակվելով հասնում են Հնդկաստանից մինչև Իսպանիա։ Դրամի անընդհատ ավելացող կարիքը մեծ կրիզիսներ է ստեղծում առևտրի բնագավառում և դանդաղեցնում պետականության ձևավորման պրոցեսը։ Եկամուտները մնացել էին գլխահարկի սիստեմի վրա, այնպես ինչպես Օմար I-ի օրով էր։ Ավելին, հպատակ բնակիչների մասսայական իսլամացումը պակասեցրել էր ջիզիայից առաջացած եկամուտը։ Պետության ղեկավարներն այն աստիճան էին մտահոգվել դրանից, որ մինչև անգամ արգելում էին հպատակների կրոնափոխությունը։

692 թվականին Աբդ-ուլ-Մելիքը աշխարհագիր կատարեց խալիֆայության սահմաններում. հաշվի առնվեցին ոչ միայն մարդիկ, այլև անասունները, ծառերը։ Աշխարհագրից հետո նա հաստատեց «Տադիլ»[2] կոչված տուրքի ձևը, որը ծանրացնում էր գլխահարկը։ Նա ընդհանրացրեց նաև հողային հարկը «խարաջը»։ Նորահաստատ տուրքերի գանձումը առիթ տվեց ամենակեղեքիչ հարկահավաքության, բռնությունների, որոնց ուղեկցում էին քաղաքական հալածանքները։

Հավանական է, որ Սամուել Անեցու հիշատակած հարկերը վերաբերում են Աբդ-ուլ-Մելիքի ժամանակաշրջանին։ Եթե այդպես է, կնշանակի ամեն երդից չորս դիրհեմ գլխահարկ էր վերցվում։ Վերցվում էր նաև բնահարկ, այսինքն՝ ցորեն, պարան, ձիատոպրակ և ձեռնոց՝ բանակի կարիքների համար։ Եվ որովհետև գլխահարկի եկամուտը չէր կարող բավարարել բազմապատկվող ֆինանսական պահանջները, իսկ գլխահարկն առավելն չորս դիրհեմ միայն կարող էր լինել[3], ուստի հարկերը սկսեցին ծանրանալ հողերի վրա։ Աբդ-ուլ-Մելիքի օրով էր, որ «խարաջն» ու «ջիզիան» անջատ իմաստ ստացան, առաջինը բացառապես հողային տուրքի, երկրորդը գըլխահարկի նշանակությամբ։

---

[1] Տե՛ս *С. Т. Еремян*, Моисей Каланкатуйский о посольстве албанского князя Вараз-Трдата к хазарскому хакану Алп-Иметверу, „Записки Института востоковедения Академии наук СССР", т. VII, М. — Л., 1939, стр. 129—155.

[2] Նշանակում է հավասարություն։

[3] Ջիզիան վճարում էր պատանեկությունից դուրս եկած ամեն մի ղիմմի («որի երեսի վրա ածելի է անցել»)։ Այդ տուրքը վճարելուց ազատվում էին երեխաները, կանայք, մուրացկանները, կույրերը, անգործները, կրոնավորները, որոնք վանքերի մեջ են ապրում աղքատությամբ և ծոմապահները։

Պատմական փաստերը ցույց են տալիս, որ տուրքերի կանոնավոր գանձումը որոշված ձևով չի բավարարել տիրապետողներին, հետևաբար հարկահավաքներն իրենց գնդերով դիմում էին կողոպուտի և բռնագրավման անսանձ միջոցների։ Հատկանշական է Ղևոնդի ավանդած դրվագը Վարդանակերտի կռվի մասին։ Երբ Արդ-ուլ-Մելիքի կողմից ուղարկված պատժիչ արշավախմբի զորագնդերը հետապնդում են հայկական զորքերին, սրանք պատգամ են ուղարկում արաբական զորքին ասելով. «Ընդէ՞ր պնդեալ դայք զկնի մեր, զինչ ինչ մեզաք ձեզ. անաւադիկ երկիրդ մեր առաջի ձեր է. ձեզ տուեալ եմք զրնակութիւնս մեր, զայգիս մեր և զանտառս և զանդաստանս մեր, արդ ընդէ՞ր և զանձինս մեր խնդրէք» (Ղևոնդ, էջ 45)։

Արդ-ուլ-Մելիքի ժամանակ վճարված գլխահարկի համար հիմք էր ընդունվում գեռ երդը։ Երդահարկը, ինչպես նշվել է քանիցս, իր սոցիալ-տնտեսական հետևանքներն ուներ։ Երդերի թիվը չէին ավելացնում տուրքը չծանրացնելու համար. ընտանիքները չնայած մարդկային բնական աճին, չէին բաժանվում, մնում էին մի հարկի տակ՝ իբրև նահապետական մեծ գերդաստան։ Պատահում էր նույնիսկ (և այդ երևում է խալիֆաների կողմից այդ բանի դեմ հրատարակված արգելքից), որ մի քանի երդեր միանալով կազմում էին մի միասնական երդ, մի հարկային միավոր։

Արդ-ուլ-Մելիքի ժամանակ հայկական հեծելազորը շարունակում էր ստանալ պետական ռոճիկ (Հովհաննես կաթողիկոս, էջ 124, Ղևոնդ, էջ 56). տուրքից զերծ էին մնում ազնվականությունը, ազատանին և եկեղեցականությունը։

Հարկային խստությունները և հալածանքները շարունակվեցին մանավանդ Մահմեդի ոստիկանության ժամանակաշրջանում, երբ Կասիմը (Կաշմ) Հայաստանի փոխ կառավարիչ նշանակվեց։ Նրա ժամանակ հայ իշխաններից էլ էին պահանջում նրանց մթերած ոսկու և արծաթի դանձերը «Եւ նոքա առ վտանդի նեղութեանն զրաղում մթերս դանձուցն իրեանց, զորս ի պահեստի եդեալ էին յերեսաց նեղչացն ի ծովու և եթէ ի ցամաքի, տային ի ձեռս թշնամեացն զի թերևս ապրեցուսցեն զանձինս իւրեանց» (Ղևոնդ, էջ 57)։

Այս խստությունները մեղմացան, երբ Վալիդ խալիֆան ժամանակավորապես Արդ-ուլ-Ազիզին ոստիկան նշանակեց։

4. Հեշամ խալիֆայից մինչև Օմայան դինաստիայի վախճանը

Այս ժամանակաշրջանը, որի տևողությունն է մոտ քառորդ դար, ընդգրկում է երկու շրջան. դրանցից առաջինը տևում է մինչև Մրվանի ոստիկան դառնալը։ Այս շրջանի համար բնորոշ է հարկերի հետզհետե սաստկացումը. երկրորդ շրջանը տևում է Մրվանից մինչև Օմայան դինաստիայի անկումը, երբ քաղաքական պատճառների բերումով նկատվում է հարկային քաղաքականության թուլացում։

Հեշամ խալիֆայի ժամանակ (724—742) հարկային քաղաքականությունը ենթարկվում է փոփոխության։ Հեշամը «էր նեղիչ և հարկապահանջ» ասում է Միխայել Ասորին։ Նա իր գահակալության առաջին տարվանից սկսած (725) հրամայեց ընդհանուր աշխարհագիր կատարել խալիֆայի սահմաններում, այդ թվում և Հայաստանում։ Հաշվի են առնվում ոչ միայն բնակիչները, այլև նրանց ստացվածքը և այդ հիման վրա հաստատ-

վում են հարկային նոր ու ավելի ծանր օրենքներ։ Ղևոնդ պատմիչը գրում է. «Առաքէր զոմն զօրավար, որում անուն էր Հերթ՝ աշխարհագիր առնել ընդ աշխարհս Հայոց վասն ծանրացուցանելոյ զանուր լծոյ ծառայութեան հարկատրութեան ազգի ազգի չարեօք» (էջ 130)։

Ասորիկն իր կարգին գրում է։ «Սա ծանրացոյց զսակ հարկի աշխարհիս հայոց». (էջ 128)։

Կաղանկատուացին գրում է. «Իսկ ի հարիւր եօթանասուն և չորս թուականութեանն հայոց, յամառն մահ անասնոց եղև, և ի ձմերան աշխարհագիրն Հերթի, որ էարկ զմարդ և զանասուն և զսահմանս երկրի ընդ հարկավ անթիւ ծառայութեանն» (էջ 368)։

Այս վկայությունից երևում է, որ գլխահարկը արդեն պահանջվում է անձերից[1], հողային հարկն էլ է մտնում ուժի մեջ։ Այս վերջինի հիմքն է հանդիսանում հողի չափը և որակը. սա «Խարաջ ալ միսահա» ձևն էր[2], իսկ թե ինչքան հարկ էր վերցվում մասնավորներից կամ ընդհանուրից, ինչպիսի ծառայություններ էին պահանջվում Հայաստանից, այդ մասին պատմական վկայություններում որոշակի փաստերի չենք հանդիպում։ Հայտնի չէ նաև թե նախորդի համեմատությամբ ինչքան են ծանրացել հարկերը։

Այս ժամանակաշրջանում քաղաքական հալածանքները սաստկացած լինելով հարկային գանձումներին ուղեկցում են գույքի բռնագրավումները ու կեղեքումները։ Միայն հարկերը չէին, որ ծանրանում էին ժողովրդի վրա։ Բացի հարկերի ծանրացումից, արտահարկային հափշտակություններից, ժողովրդի անտեսությանը ծանր հարված տվեց խոզասպանությունը, որի հետևանքով ժողովուրդը զրկվեց իր ապրուստի և եկամտի կարևոր մի միջոցից։ Հափշտակությունների թվին էր պատկանում նաև հանքերի և ծովի սեփականացումը և մենաշնորհը արաբների կողմից։ Խոսելով Վանա ծովի մասին, Իբն-էլ-Աթիրը գրում է. «Մուհամեդը արգելեց ծովակում որսալ և նրա վրա նշանակեց մի մարդ, որ նա որսա և վաճառի՝ ստանալով նրանից գինը։ Այսպես այդ իրավունքն անցավ նրա որդի Մրվանին (Իբն-էլ-Աթիր, էջ 130)։

Ոչ միայն ինքը՝ խալիֆան, այլև նահանգների կառավարիչներն անսանձ փող էին հավաքում և որոնում էին հարստանալու միջոցներ։

Օմայան դինաստիայի ամբողջ ժամանակաշրջանում հայոց զորքի տարեկան ռոճիկը վճարում էր խալիֆան։ Հեշամի ժամանակ երեք տարի դադարեցվեց այն, բայց Աշոտ իշխանի դիմումի վրա՝ ռոճիկը վճարվեց։

Մրվան ստիկանը, որ հայերի նկատմամբ այնքան դաժանություններ կիրառող Մուհամեդի որդին էր, քաղաքական սերտ հարաբերություններ մշակեց Բագրատունիների հետ։ Նրա ժամանակ հարկային խստությունները որոշ չափով թեթևացան։ Երբ Մրվան II-ը խալիֆաթ դարձավ (744—750),

---

[1] Ջիզիայի երեք ձևերից ամենախիստն էր սա. ուրեմն ամենաթեթև հավաքական գլխահարկից (մուկատա) անցել էր երդահարկին և ի վերջո անձ գլխի (ալ-ռուուս ար ռիգալ)

[2] Խարաջի մի ուրիշ ձևն է «Խարաջ ալ մուկասամա» կոչվածը, որը նկատի էր առնում բերքի տեսակն ու քանակը՝ առանց հաշվի առնելու հողի տարածությունը կամ որակը։

նա սկսեց զգուշանալ Հայաստանի հանդեպ խիստ քաղաքականություն վարելուց։

5. Աբասյան դինաստիայի շրջան

Այս շրջանն սկսվում է 750 թվականից, Օմայան վերջին խալիֆայի Մրվան II սպանությամբ և Աբուլ Աբասի խալիֆա դառնալով։

Այս շրջանը կարելի է բաժանել երեք էտապի, որոնք հատկանշական են քաղաքական պատճառների հետևանք հանդիսացող տնտեսական վիճակի ժամանակավոր մեղմացումով կամ սաստկացումով։

Առաջին էտապը, որը տևել է մինչև IX դարի առաջին քառորդը, հատկանշական է ամենածանր հարկային կեղեքումներով։ Երկրորդ էտապը տևել է մինչև Մութավաքիլի գահակալությունը, այսինքն՝ մինչև 848 թվականը, երբ խալիֆաթը՝ ներքին պառակտումների, կրոնական դիմակի տակ քաղաքական և սոցիալական ապստամբությունների թատերաբեմ հանդիսանալով, թուլանում է կենտրոնական իշխանությունը։ Այս շրջանը հատկանշական է ճնշումների մասնակի թեթևացմամբ։ Երրորդ էտապը բռնի հարկերի և հալածանքների նոր շրջան է և տևում է մինչև 662 թվականը։

Աբասյանների դինաստիան Խորասանի և Պարսկաստանի խոշոր հողատերերի և առևտրականների շահերին ծառայող մի քաղաքական կազմակերպություն էր։ Բաղդադի արքունիքն իր մեծ ծախսերը բավարարելու համար նորանոր եկամուտներ է պահանջում։ Թյուրքական վարձկան զորախմբերը խլում են եկամուտների խոշորագույն մասը, իսկ եկամուտները նվազում են զանազան պատճառներով։ Նահանգների ազդեցիկ կառավարիչները հարկերի մեծ մասը յուրացնում են և չեն մուծում պետական գանձարանը։ Բարձր դիրքի տեր անձնավորությունները կաշառքով և առևտրական ու հանքային մենաշնորհներ յուրացնելով մեծամեծ հարստություններ էին դիզում[1]։

Մյուս կողմից՝ Աբասյանները, զրկվելով խալիֆաթից անջատված Աֆրիկյան երկրների եկամուտներից, հարկային ամբողջ ծանրությունը կենտրոնացնում էին Արևելյան նահանգների վրա։ Այսպես, ըստ Կոդամայի ցուցակի, Մաամունի (833—842) ժամանակ պետական ողջ եկամուտը 388 միլիոն դիրհեմ էր, իսկ հազիվ երկու տասնյակ տարի հետո՝ Մութավաքիլի (847—861) ժամանակ այդ եկամուտը ավելի քան կրկնապատկվեց և բարձրացավ 960 միլիոնի։ Աբասյանների հարկային բռնությունների մասին արտահայտվել են մեր պատմիչները, սկսած հենց առաջին խալիֆայի՝ Աբուլ-Աբասի ժամանակվանից, երբ նա իր եղբորը՝ Աբու Ջաֆար Ալ-Մանսուրին ուղարկեց Հայաստան, որը «բռնացաւ մշտօք և նեղութեամբք վտանգէր զամենեսին և հասուցանէր ի չքաւորութիւն տնանկութեան մինչև պահանջել հարկս և ի մեռելոց...Խոշտանգէր և զբնակիչս աշխարհիս բռնագոյն և դառն հարկապահանջութեամբ տանել ըստ գլխոյ բազում զուզէ[2]»։

---

[1] Երբ Հարուն խալիֆան սպանեց Բարմեքյանների պետին և գրավեց նրա ստացվածքը, 30 միլիոնից ավելի փող կար նրա դրամարկղում, բացի ագարակներից, ապարանքներից և գոհարեղեններից։

[2] Զուզ. քաղդեական անուն, ասորերեն ժուզ, որը նշանակում է դիրհեմ=10 կոպեկ ոսկե դրամ կամ 40 սանտիմ։

արծաթոյ, գնել կնիք կապարեայ[1] յամենեցուն պարանոցս» (Ղևոնդ, էջ 158—159)։

Ղևոնդի վկայությունից երևում է, որ ոչ միայն հարկերն են ծանրացել, այլև գլխահարկի գանձման ձևն է փոխվել և փոխանակ երդի՝ գանձվել է ըստ անձի, որը նոր ճնշումների, խոշտանգումների առիթ է տվել։ Նույն ձևով է արտահայտվում Ասողիկը. «Եւ առաքէ զեղբայր իւր զմիւս Աբդլայ՝ շրջել ընդ ամենայն աշխարհս իւրոյ իշխանութեան առնուլ հարկս ի կենդանեաց և ի մեռելոց՝ ըստ մարդաթուի» (էջ 135)։

Գանձակեցին գրում է. «Սա բազում չարիս անցոյց ընդ աշխարհս Հայոց հարկապահանջութեամբ և յափշտակութեամբ և այնքան նեղեացն մինչև զմեռելոցն ի կենդանեացն պահանջել դհարկս և հատաւ գիւտ արծաթոյ յաշխարհէս Հայոց» (էջ 67—68)։

Արաբյանների իշխանության գլուխ անցնելուց անմիջապես հետո, Կոստանդին Ե-րդ Կոպրոնիմոս կայսրը դրավեց Կարինը և ավերեց պարիսպները։ Ալ-Մանսուրը հրամայեց Եզիդ ոստիկանին՝ վերաշինել քաղաքը, «Իսկ ի գալ միւսոյ ամին կազմեալ Եզիտն զզօրսն որ ընդ ձեռամբ իւրով. երթայր. հասանէր ի քաղաքն Կարնոյ և արկանէր մարդահարկ ի վերայ աշխարհին, և հաւաքեալ զրաղմութիւն անթիւ, կացուցանէր գործավարս ի վերայ գործոյն, և փոյթ յանձին կալեալ շինէր զխրամատեալ պարիսպ քաղաքին։ Եւ ածեալ արս յորդւոցն Իսմայելի ընակեցոյց ի նմա նոցին ընտանեօք պահել զքաղաքն և զզուշանալ ի թշնամեացն։ Եւ կարգեաց նոցա պատրաստութիւն կերակրոց յաշխարհիս Հայոց» (Ղևոնդ, էջ 161)։

Ղևոնդի այս տողերից երևում է, որ եղել է երկու տեսակ հարկ՝ աշխատահարկ և պարենատուրք[2]։

Աբասյան 2-րդ խալիֆայի, Ալ-Մանսուրի ժամանակ, հարկերը ավելի են ծանրանում։ «Զսոյն ժամանակս ի հրամանատարութեան Եզիտի և յիշխանութեանն Աբդլայի միւսոյ, յոյժ ծանրացաւ անուր լծոյ հարկապահանջութեան ի վերայ աշխարհիս Հայոց... Յորմէ փախստեայ եղեալ բազումք ի յայրս և ի փապարս երկրի զօղեալ թագչէին։ Եւ ոմանք ձիւնահեղձ և գետավէժ լինէին վասն անտանելի աղետից. զի ոչ էր գիւտ զոր հայցէին դտանել պահանջումն ոսկի արծաթոյն, այլ ըստ գլուխս արանց, որովք թափուր մնացեալք յամենայն ստացուածոց՝ կապէին կապանօք ոնանկութեան երկիրս Հայոց, և առհասարակ ճաշակէին ի հնոցէ աղքատութեան նախարարք և մեծամեծք» (Ղևոնդ, էջ 166, 167)։

Մխիթար Այրիվանեցին 738 թվականի տակ գրում է բռնի հարկերի կապակցությամբ «և հատան յամենայն աշխարհէ ոսկի և արծաթ» (էջ 52)։

Բուռն բառերով է որակում Կաղանկատուացին «հարաւայնոցն» բռնությունները և «ծծել զպարարութիւն երկրիս» (էջ 373)։

Այնուհետև՝ հարկահավաքումը կատարվում էր ուղղակի, և ոչ թե հայոց իշխանների միջոցով։ Հովհաննես կաթողիկոսը որոշակի ասում է

---

[1] Սկզբնական շրջանում սովորաբար տուրք վճարողների վզին կապարյա կնիք էր դրվում (խատամա ֆի բիրբա)։ Ավելի ուշ ստացականի սիստեմն ընդունվեց։ Թվում է թե Հայաստանում կիրառվում էր հին ձևը։

[2] Պետք է զանազանել պարենատուրքը՝ բնատուրքից։ Առաջինը սննդամթերք է և բնորոշվում է ըստ հատկացման, երկրորդը հողային և արհեստավորական արտադրության վրա դրված տուրք է և բնորոշվում է ըստ եկամտի տեսակի։

«Զայսու ժամանակաւ Եղիտ ոմն ոստիկան ի Հայս ամիրապետէն առաքեալ լինէր, որ իրրև եհաս ի Նախջաւան քաղաք, ապա կուսակալս և գործակալս բստ գաւառաց գաւառաց առաքէր» (էջ 138)։

Մի ուրիշ շատ կարևոր կետ էլ, որը վերաբերվում է հարկերի դրամով հավաքմանը, երևում է բերված վկայություններից։

Արաբները Հայաստանից որոշ ժամանակ միայն դրամական հարկ են վերցրել. հետագայում՝ խալիֆաթի կարիքների և պահանջների ավելացման հետևանքով վերցվել է նաև մեծ քանակությամբ բնատուրք, բայց տուրքի մեծագույն մասը դարձյալ վճարվում էր դրամով։ Այդ է պատճառը, որ դրամի սպառվելը, ոսկու և արծաթի հանքերի շահագործման ընդհատումը ծանրացնում էր հարկային բեռը և աղետներ էր պատճառում բնակչությանը, իսկ մետաղի հայտնությունը թեթևացնում էր տնտեսական տագնապն ու հարկային լուծը, ինչպես Ղևոնդն է ասում. «Զսան գիւտի արաթոյն հանգեաւ երկիրս առ փոքր մի ի չար տառապանաց վտանգին. քանզի և լերինք արծաթոյ յայտնեցան յաշխարհիս Հայոց հատանել ի նոցունց դխանութս արծաթոյ զոյ առ ի պէտս մարդկան» (էջ 188)։

Հայաստանում շատ տեղերում՝ չորրորդ Հայքում, Սպերում, Տայքում, Վայոցձորում, Զորափորում արծաթի և ոսկու հանքեր կային։ Նախարարներն ունեին դիպած շատ հարստություն «ոսկի և կշիռ արծաթոյ» (Ղևոնդ, էջ 57)։ Հարկահաններն պահանջում էին անդադար տալ «մթերս ոսկւոյ և արծաթոյ» (Ղևոնդ, էջ 159)։ «Եւ նոցա մտեալ ի քաղաքն ժողովեցին ոսկի և արծաթ» (Սեբեոս, էջ 243)։

Պարզ երևում է, որ ոչ միայն կտրված փող էր վճարվում, այլև ոսկի և առավելապես արծաթ՝ ձույլ մետաղ, որը տեղն ու տեղը վերածվում էր դրամի։

Փողի կարիքը (հարկերի հաշվման և առևտրի պահանջների համար) ստիպում էր կառավարիչներին ստացված ձույլ մետաղը փողի վերածել։

Պետերմանը տալիս է անուններն այն ոստիկանների, որոնք 786 թվականից մինչև 825 թվականը Պարտավում կտրել են արծաթ դրամներ, որոնցից նմուշներ մնում են մինչև այսօր (Laurent — l' Armenie entr Byzance et l' Islam, էջ 340,342,343,344)։

Հարկերի ծանրության չտոկալով, շատերը իրենց անձը վաճառքի էին հանում։ Սամվել Անեցին գրում է. «Այս Զաքարս այնքան ճշդիւ ժողովեաց ի քրիստոնէից զոսկի և զարծաթ, մինչև զգերեզմանս մեռելոցն բանային և զոսկին առեալ տային ինձ» (էջ 88)։

Այս բոլորը ցույց է տալիս Արաբական առաջին խալիֆաների սարսափելի հարկապահանջությունը։ Այդ անտանելի բռնությունները կատարվում էին ոչ միայն Հայաստանում, այլև խալիֆաթի բոլոր նահանգներում՝ ամեն կողմ ստեղծելով ժողովրդական սպառնալից գժգոհություններ։ Դրա համար է, որ Աբու Յուսուֆ Յակուբը «Քիտաբ էլ Խարաջում» էլ-Մահդի խալիֆային խորհուրդներ է տալիս մեղմացնել ճնշումը։ «Ելխահարկի գանձման ժամանակ չպետք է հարվածներ տալ հարկատուին և ոչ էլ նրան կանգնեցնել արևգակի տակ, և ոչ էլ նման միջոցառումների դիմել և ոչ էլ ֆիզիկական նոզկալի տանջանքներ տալ»։

Հայ ժողովրդի 774 թ. ապստամբությունը ուղղակի հետևանքն էր այդ բռնությունների։

Միաժամանակ հարկահանության միջոցները մեղմացնելուց հետո, բռնությունները վերսկսվում են Հարուն առ-Ռաշիդի իշխանության օրոք։ Սրա կողմից Հայաստան ուղարկված Սուլեյման իբն Եզիդ իբն էլ Ասամ էլ Ամիրին՝ ամենածանր հալածանքների ենթարկվեց ժողովրդից։ Սուլեյմանը իր փեսային՝ իբն-Դոկեին նշանակեց հարկահավաք՝ ամենալայն իրավունքներով։ «Բսկ նորա դանրառնալի լծոյ ծանրութիւնն եդեալ ի վերայ մարդկան, զոր ոչ կարէին բառնալ, զի որ ինչ դտանէր ի ձեռին ուրուք հայթայթանք՝ ընդ անձին իւրոյ ոչ լինէր բաւական գնոց։ Այս Սուլէյման յղէր զոմն անօրէն և վատթարագդի, որդի աղախնոյ միոյ, որ էր Հոռոմ յազգէ փեսայ Սուլէյմանայ, որում անունն էր Իբն Դոկէ, որ եկեալ ի քաղաքն Դուին՝ սաստիկ դժնդակութեամբ խոշտանգէր զբնակիչս աշխարհիս հարկապահանջմամբ և հակառակ նախարարների և կաթողիկոսի թախանձանքներին, սա «յղեալ ընդ կողմանս կողմանս աշխարհիս պահանջողս, և տուեալ հրաման կրկին քան զոր ըստ ամին պահանջէին. ի միում վայրկենի հաւաքել» (Ղևոնդ, էջ 201)։ Նույն հարկահավաքը «Տայր կնիք կապարեայ դնել յամենեցուն պարանոցսն, և առ մի մի կնիք պահանջէր զրաղում զուզայս մինչև հասանել մարդկան ի յետին տնանկութիւն յանհամբեր նեղութեանցն առ ի չարաշուք դահճէն» (Ղևոնդ, էջ 201—202)։ Եվ ավելացնում է «յայնմհետե ոչ ոք էր տէր ընչից իւրոց, այլ առհասարակ վարէին յաւարիս» (Նույն տեղում)։

Նույնը վկայում է նաև Ասողիկը (էջ 133—134)։

Հետո «Եւ իբն Տօկլ զամենայն դանձս և զսպասս եկեղեցւոյն սպառնալեօք և ահիւ տայ բերել առաջի իւր և առնոյր որ ինչ ցանկալի թուէր անձին իւրոյ։ Եւ բաղում կաշառօք յաջորդի յաթոռ հայրապետութեանն Ստեփանոսս» (էջ 135)։

Այս հալածանքների հետևանքը լինում է այն, որ մարդիկ փախչում են իրենց հայրենիքից նրանց ստացվածքն ու անասունները տրվում են ավարի։ Ովքեր կարողանում են Բյուզանդիա, իսկ «Մինբլքորքն, որք մնացին յաշխարհս մեր՝ առ սաստիկ կարօտութեանն անձնատուրք եղեն ի ծառայութիւն որդւոց Իսմայիլի փայտակոտորք և ջրաբերք նոցին եղեալք» (Ասողիկ, էջ 134)։

Արաբայանների ժամանակ դադարեցվեց բանակի ոռճիկի վճարումը խալիֆաթի կողմից։ Հայ իշխանները պարտավորվում էին տեղական միջոցներով հոգալ զորքի ծախսերը, մի բան, որը նորանոր տուրքեր էր ավելացնում բնակչության վրա։ Եզիդ ոստիկանի օրով էր, որ «Հատաւ սակ արծաթոյն, որ դայր ամի ամի յարքունուստ զօրացն Հայոց։ Եւ զհամար հեծելոցն պահանջէին յիշխանացն և հարկ լինէր ի տանց իւրեանց հանդերձել զդունդս զօրացն և զրնթացս զրավաստակ աշխատութեանցն ողջ պահելոյ» (Ղևոնդ, էջ 160)։

Ինչ էր հայերի կողմից վճարված հարկի քանակը Արաբայան խալիֆաների ժամանակ։

Հայկական աղբյուրները որոշ գումար չեն նշում։ Նրանք, ինչպես տեսանք, գանգատվում են միայն հարկերի անտանելի ծանրության մասին։ Ավելի կոնկրետ դեպքում հիշատակում են թե գանձված հարկերը կրկնապատկվեցին։ Ավելի որոշ տեղեկություններ տալիս են արաբական աղբյուրները։ Ըստ Իբն Խալդունի, Ել-Մահդի և Հարուն խալիֆաների ժա-

մանակ, 8-րդ դարի վերջում և 9-րդ դարի սկզբում, Արմինիայի (Վրաստանն ու Ադվանքը միասին վերցրած) հարկը 13 միլիոն դիրհեմ էր՝ երկու հերթով վճարելի։ Այդ գումարի կեսից ավելին սոսկ Հայաստանին ընկած բաժինն էր։ Ըստ նույն աղբյուրի, հայերը վճարում էին նաև 530 բաթլ բակմ (նախշված կերպաս), տաս հազար բաթլ ագած և 10 հազար բաթլ սուրմահի ձուկ, 200 ջորի և 30 նժույգ (Իբն Խալդուն, բնագիր 1-ին, էջ 151)։

819—852 թվականներին, համաձայն Կոդամայի և Խորդադբեյի հարկային ցուցակի, Հայաստանի վճարած տուրքը 8 միլիոն էր, ինչ որ գրեթե համապատասխանում է Իբն-Խալդունի ցույց տված գումարին։

Արաբյանների ժամանակ Հայաստանը վճարում էր նաև որոշ քանակությամբ այլ բնատուրք՝ 20 գորգ, 30 բազե և այլն։ Սրանք ավելի խալիֆայական արքունիքը ուղարկված նվերներ էին։ Դրանից դուրս, պատերազմի և այլ առիթներով, զանազան կարիքների համար վերցվում էր «աւար ի պատճառս ոռճկաց պիտոյից այրուձիուն», ասում է Թովման (էջ 159)։ Նշանակում է, հաճախ հայերը պարտավորվում էին վճարել նաև մուսուլմանական բանակի ոռճիկն ու ծախսերը։

Արաբների կողմից նշանակված կառավարչի (Վալի կամ Ամիր) իշխանության տակ հաճախ մտնում էին ուրիշ ընդարձակ նահանգներ էլ։ Ուստի ամեն երկրի համար նա նշանակում էր մի տեղապահ (Ամիլ). հարկերի գանձման գործում սրան էլ աջակցում էին ենթատեղապահները։ Այդ պաշտոնյաներն այնպիսի դաժանությամբ էին շահագործում բնակչությանը, որ վերջինս հաճախ հրապարակային ելույթներով արտահայտում էր իր դժգոհությունները։ Հայ նախարարները, մեղմացնելու համար հարկահավաքների խստությունները, նրանց տալիս էին կաշառք։ «Իսկ տոհմ նախարարացն, որ կամաւ, որ յակամայ յաճախէին տալ ընծայս ձիոց և ջորւոց և հանդերձից պատուականաց և զայլ մթերս ոսկւոյ և արծաթոյ որպէսզի կարասցեն լնուլ զրերան վիշապին, որ յարձակեալ էր ապականել զերկիրս», — գրում է Ղևոնդը (էջ 159)։ Կամ ինչպես նշում է Թովման՝ Վասպուրականի իշխանի մասին, «առաքէ զոմանս ի մեծամեծաց իւրոց ընդառաջ նորա պատարագօք ոսկոյ և արծաթոյ և պատուական հանդերձից, համոզեալ մի ելանել յերկիրս հայոց» (էջ 183)։

Բելազորին վկայում է, թե Խալեդ իբն Եզիդը հայ իշխաններից ընդունում էր ընծաներ և նրանց հետ բարեկամաբար էր վարվում (էջ 63—64)։

Ինչպես ասացինք, Օմայանների դինաստիայի ժամանակ հարկերը վճարվում էին ոչ թե անհատաբար, ամեն հարկատու երդի կողմից, այլ՝ հավաքաբար, ամբողջ գավառի կողմից հարկը տալիս էր իշխանը։ Այս պայմաններում հարկահանները երկրի ներսը չէին մտնում, ուղղակի ժողովրդի հետ շփում չէին ունենում։ Արաբյանների ժամանակ դրությունը փոխվեց։ Արաբների անմիջական տիրապետության, հայկական ինքնավարության գրեթե ջնջման հետևանքը հանդիսացավ ուղղակի հարկահավաքությունը, որով բռնակալության լուծը անմիջականորեն կրում էր ժողովուրդը։ Այս տևեց մինչև IX դարի սկիզբը։ այսինքն՝ Հարունի իշխանության վերջը։ Այնուհետև՝ մինչև Մուտավաքիլի իշխանության գլուխ անցնելը վերանաստատվում է «մուկատայի» դրությունը։ Թովմա Արծրունին վկայում է, որ երբ Մուտավաքիլի ուղարկած հարկահանները փորձում էին

մոնել երկրի ներսը, հայ իշխանը հիշեցնում էր նրանց, իհարկե, մոտիկ անցյալի օրինակի վրա, թե ինչպես պետք է կատարվի հարկի գանձումը։ «Եւ նոքա տան տանել նմա գհարկս և հասս արքունի և դարձուցանեն գնա ընդ նոյն ուստի եկն» (էջ 183)։ Վասպուրականի իշխանը գրում է Ալայ ամիրային. «արդ դու յարուցեալ գնասցես ի մի քաղաքացդ հայոց, որպես օրէն է աշխարհակալաց և մինք կացուք քեզ գհասս հարկայ և հաճեսցուք զմիտս քոս» (Ղևոնդ, էջ 159)։

Հետևյալ կերպ կարելի է ամփոփել Արասյանների ժամանակաշրջանի էտապի հարկային վիճակը։

1. Գլխահարկը գանձվում էր ըստ անհատի՝ մինչև 4 դինար։

2. Հողային հարկը վճարվում էր առանց որոշ հաշվի, ըստ պահանջողի ցանկության։

3. Ռնահարկը եղել էր համեմատաբար նվազ ծանր։

4. Պարենտուրքը վճարվում էր մուսուլմանական ռազմական գաղութներին, օրինակ Գարինի պահակազորին։

5. Վճարվում էր ռոճիկ՝ մուսուլման բանակին։

6. Ընդհանրանում էր մարդահարկը, այսինքն՝ հարկի փոխարեն պետության օգտին ձրի աշխատելու դրությունը։

Սրանց վրա պետք է ավելացնել անհաշիվ կաշառքը, կողոպուտը, բռնագրավումները և ամեն կարգի խոշտանգումները։

Հարկերի թեթևացումը տևեց մինչև Մութավաքիլի իշխանության գլուխ անցնելը, երբ նա ծրագրեց Հայաստանի վերջնական նվաճումը։ Նա սկսեց իր ծրագրի գործադրությունը՝ Հայաստան ուղարկելով մի խումբ հարկահավաքների՝ Աբու Սայիդի գլխավորությամբ։ Երբ նա եկավ հարկերը գանձելու, հայ իշխանները, իրենց վերջին 30 տարվա լայն առանձնաշնորհումները վտանգված տեսնելով միացան և երբ նրա կողմն անցած կայսիկ իշխան Մուսա Իբն Զուրայան մտավ Տարոնի երկիրը հարկ վերցնելու, նրա դեմ եկան հայ ֆեոդալները՝ Աշոտ Արծրունու ղեկավարությամբ։ Իսկ հայտնի է, թե Յուսուֆ Ամիրայի հարկահանության և քաղաքականության նվաճողական ձեռնարկի դեմ, այս անգամ ժողովուրդն էր, որ ոտքի կանգնեց և խութեցիները սպանեցին տարար հարկահանին.

Հակառակ երկու դար տևող հարկային ծանր ճնշումներին, ավարին ու հարստահարություններին, Հայաստանը տնտեսապես ու քաղաքականապես չկործանվեց, այլ սկսած IX դարի երկրորդ կեսից վերականգնվեց որպես ինքնուրույն երկիր։